Կարգապահական գործ թիվ ԿԳ-18138

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի ապրիլի 17-ի թիվ 70-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/39-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՄԼԵՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Համլետ Միրզոյանին (արտոնագիր՝ թիվ 2059) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Նվեր Շահնազարյանը **(այսուհետ նաև՝ Դիմող),** դիմելով Պալատ**,** հայտնել է, որ թիվ ՏԴ2/0054/01/17 քրեական գործով իր պաշտպան Համլետ Միրզոյանը (**այսուհետ՝ նաև Պատասխանող**) դիտավորյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարան սահմանված ժամկետում վերաքննիչ բողոք չի ներկայացրել, որով ցանկացել է, որ Դիմողը չիմանա ինչ շարունակություն է ունեցել թիվ ՏԴ2/0016/01/17 քրեական գործի քննությունը: Ըստ այդմ, խնդրել է ուսումնասիրել թիվ ՏԴ/0054/01/17 քրեական գործը և դրանից, Դիմողի պնդմամբ, անհայտ պատճառներով անջատված թիվ ՏԴ2/0016/01/17 քրեական գործը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի կողմից 24.09.2018թ. թիվ 354-Ա/ԿԳ-18138 որոշմամբ **(այսուհետ՝ նաև Որոշում)** փաստաբան Համլետ Միրզոյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.6.1, 2.7.2, 3.1.1, 3.1.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

01.10.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռուբեն Բալոյանին (**այսուհետ նաև՝Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել և Պալատի խորհրդի նիստին չի ներկայացել, թեև պատշաճ կարգով տեղեկացված էր նիստի ժամանակի և վայրի մասին:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

20.09.2018թ. Պալատ է մուտքագրվել Պատասխանողի բացատրությունը, որում նշվել է հետևյալը:

Պատասխանողի և Դիմողի միջև կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագիր, համաձայն որի՝ Պատասխանողը պետք է ներկայացներ Դիմողի շահերը Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում:

Համաձայն պայմանագրի 1.3 կետի՝ գործի քննությունը վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններում շարունակվելու դեպքում սույն պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել, կողմերի համաձայնությամբ ձեռք բերված նոր պայմաններով ծառայությունների մատուցման գումարը Պատվիրատուի կողմից վճարվելու դեպքում:

Պատասխանողը նշել է նաև, որ գործի քննությունն առաջին ատյանի դատարանում ավարտվելուց հետո Դիմողը հրաժարվել է փաստաբանի հետագա ծառայությունից և պահանջել գործի նյութերը, և Պատասխանողը նրան տրամադրել է գործի նյութերի լուսապատճենները:

Պատասխանողը հայտնել է նաև, որ գործի ավարտից որոշ ժամանակ անց տեղեկություն է ստացել այն մասին, որ նույն գործով մեղադրվող երկու այլ անձանց մասով ՀՀ վերաքննիչ դատարանը բեկանել է առաջին ատյանի դատարանի դատավճիռը, և ինքն իր խղճի թելադրանքով և իր նախաձեռնությամբ, առանց որևէ վճարի և պայմանագրի, մարդասիրությունից ելնելով, առանց Նվեր Շահնազարյանի իմացության, նոր երևան եկած հանգամանքներով վերաքննիչ բողոք է ներկայացրել, որը սակայն վերաքննիչ դատարանի կողմից մերժվել է:

Պատասխանողը նշել է նաև, որ հետագայում Դիմողը հեռախոսազանգով դիմել է իրեն վճռաբեկ բողոք ներկայացնելու խնդրանքով, որն իր կողմից մերժվել է, քանի որ պլանավորած է եղել մեկնել արտերկիր բուժման նպատակով և բնականաբար երկու օրվա ընթացքում չէր կարող բողոք ներկայացնել և բացի այդ պարտավոր էլ չէր դա անելու:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

28.11.2018թ. Նախապատրաստողը կազմել է եզրակացություն, որի համաձայն՝ հաստատված են համարվել հետևյալ փաստերը:

- 22.09.2017թ. Պատասխանող Համլետ Միրզոյանի և Դիմող Ն. Շահնազարյանի միջև կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի 1.1-րդ կետի համաձայն՝ պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ներկայացնել նրա շահերը: Պայմանագրի 1.3-րդ կետի համաձայն՝ գործի քննությունը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում շարունակվելու դեպքում պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել, կողմերի համաձայնությամբ ձեռք բերված նոր պայմաններով

ծառայությունների մատուցման գումարը Պատվիրատուի կողմից վճարելու դեպքում: Պայմանագրի 2.1-րդ կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար պատվիրատուն վճարում է 60.000 ՀՀ դրամ:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2019 թվականի ապրիլի 17-ին, ժամը՝ 19:00-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ՝ նաև Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) ՏԴ2/0054/01/17 քրեական գործով Պատասխանող Համլետ Միրզոյանը հանդիսացել է Դիմողի Նվեր Շահնազարյանի պաշտպանը:

Սույն փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրությամբ, Դիմողի և Պատասխանողի միջև կնքված փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրով:

2) Դիմողի և Պատասխանողի միջև կնքված փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ներկայացնել նրա շահերը: Նույն պայմանագրի 1.3-րդ կետի համաձայն՝ գործի քննությունը վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում շարունակվելու դեպքում սույն պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել, կողմերի համաձայնությամբ ձեռք բերված նոր պայմաններով ծառայությունների մատուցման գումարը Պատվիրատուի կողմից վճարելու դեպքում: Պայմանագրի 2.1-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար պատվիրատուն վճարում է 60.000 ՀՀ դրամ:

Սույն փաստերը Պատասխանողի բացատրություններով և Դիմողի և Պատասխանողի միջև կնքված փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագրով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Համլետ Միրզոյանը փաստաբան է հանդիսանում 14.03.2016թ., և 2016-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 24.09.2018թ. թիվ 354-Ա/ԿԳ-18138 որոշմամբ հարուցված կարգապահական գործը):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Համլետ Միրզոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 3.1.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը չպետք է վարի վստահորդի գործը, եթե բացակայում է այդ վստահորդի հանձնարարությունը՝ բացառությամբ 3.1.2 ենթակետում նշված դեպքերի:*

Կանոնագրքի 3.1.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը կարող է վարել գործը, եթե՝*

- նրան է դիմել վստահորդի ազգականը կամ ծանոթը.

- նրան է դիմել վստահորդի փաստաբանը կամ լիազոր ներկայացուցիչը:

Սույն ենթակետում նշված հանձնարարությունն ընդունելուց հետո փաստաբանը պարտավոր է ողջամիտ ժամկետում վստահորդից կամ նրա լիազոր ներկայացուցչից ստանալ իր լիազորությունների վերաբերյալ համապատասխան հավաստում: Այդպիսի հավաստմանը կարող է հավասարեցվել օրենքով սահմանված փաստաբանի անունով տրված լիազորագիրը:

Երբ փաստաբանին հանձնարարություն տվող անձի ինքնությունը, իրավասությունը և լիազորությունը պարզ չեն և դրանք չեն պարզվել նույնիսկ փաստաբանի ջանքերի արդյունքում, ապա փաստաբանը պարտավոր է հրաժարվել հանձնարարությունից:

Կանոնագրքի 2.6.1 ենթակետի համաձայն՝ վստահորդի և փաստաբանի հետ պայմանագիր կնքած պատվիրատուի շահերի միջև հակասություն առաջանալու դեպքում, փաստաբանը պետք է ելնի միայն վստահորդի շահերից:

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ *փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:*

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:*

Խորհուրդը գտնում է, որ սույն գործում առկա չեն հանգամանքներ, որոնք կվկայեն Պատասխանողի վարքագծում Կանոնագրքի 2.6.1, 2.7.2, 3.1.1, 3.1.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշների առկայության մասին:

Մասնավորապես, Դիմողը չի վիճարկում Պատասխանողի կողմից իր անունից նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերաքննիչ դատարան դիմելու վարքագծի իրավաչափությունը, որպիսի պայմաններում Խորհրդի կողմից նշված հարցադրման քննարկումը կլինի առարկայազուրկ, քանի որ Դիմողի կողմից Պատասխանողի համապատասխան վարքագծի իրավաչափության խնդիրը Խորհրդի առջև չբարձրացնելը

Խորհրդի կողմից կարող է ողջամտորեն որակվել որպես Պատասխանողի կողմից նոր երևան եկած հանգամանքների հիմքով վերաքննիչ դատարան դիմելու Դիմողի վարքագծի իրավաչափության ընդունում:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Համլետ Միրզոյանի վարքագծում Կանոնագրքի 3.1.1 ենթակետի խախտման հատկանիշները բացակայում են:

Կանոնագրքի 2.6.1, 2.7.2, 3.1.2, 3.1.8, 3.5.5 ենթակետերի մասով ևս Խորհուրդը գտնում է, որ կարգապահական գործի քննության արդյունքում չեն ներկայացվել պատշաճ, վերաբերելի և բավարար ապացույցներ, որոնցով կհաստատվեր Պատասխանողի կողմից Կանոնագրքի նշված ենթակետերի խախտման փաստը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7- րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Պալատի նախագահի 24.09.2018թ. թիվ 354-Ա/ԿԳ-18138 որոշմամբ փաստաբան Համլետ Միրզոյանի (արտոնագիր՝ թիվ 2059) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Համլետ Միրզոյանին և դիմողին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստա.նալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյան

17 ապրիլի, 2019թ.
թիվ ԿԳ/39-Ա
ք. Երևան